

նի Ստեփաննոս Վարդապետի կամ Սա-  
յեաք Նովայի հետ:

Եզրակացնելով. Գ. Ասատուրը յայ-  
տարաբուս է, որ «պրոֆ. Մելիֆսէք-  
բեգի փորձերը նոր բան ասելու Ս. Նո-  
վայի մահուան մասին շատ են անյա-  
զող . . .» եւ որ իր ուժի մէջ է մնում

«ամէնքից ընդունած մշտաբարութիւնը»,  
այսինքն որ 1795 թ. սեպտեմբեր ամսին  
Սայեաք Նովան սպանել է Թիֆլիզում,  
մեծ բերդի եկեղեցու բակում եւ քաղ-  
ւել նոյն եկեղեցու հիւսիսային փոքր  
դրան առաջ:

Ա. Խ.

**ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒ 100-ԱՄԵԱԿԸ**

Օգոստոս 16-ին Վենետիկի Միխ-  
քարեանները եւ Մուրատ-Ռաֆայէլեանի  
հախկին սաները տօնած են Մուրատ-  
Ռաֆայէլեան վարժարանի հիմնարկու-  
թեան հարիւրամեայ տարեդարձը:

Հագուագիւտ տօն մըն է այս որ չը  
պիտի պարսիակէր միայն Ս. Ղազարի  
կղզեակին մէջ: Այս դպրոցը մէկ դարի  
ընթացքին ունեցած է խոշոր մշակու-  
թային նշանակութիւն եւ անոր յորել-  
եանը համագրային նշանակութիւն ու-  
նի: Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը  
տւած է բազմաթիւ վաստակաւոր գոր-  
ծիչներ հայ կրթութեան, մշակոյթին եւ  
հանրային միւս ասպարէզներուն:

Անոր շուրջ բոլորւած են եղեր գի-  
տութեան եւ ազգ. բանասիրութեան նը-  
ւիրւած տիտաններ - Ալիշան, Հիւր-  
միւզ, Տաշեան, Իննիսեան, Այվազեան  
եւ այլ բազմաթիւ դէմքեր, որոնց շուր-  
ջին եւ ազդեցութեան տակ դաստիարակ-  
ւած են սերունդներ:

Հնդկահայ բարերարներու այս նը-  
ւերները անգնահատելի բարիք եղած է  
մանաւանդ արեւմտահայութեան:

Այս տարի տօնեցաւ նաեւ մէկ դա-  
րի պատմութիւն ունեցող Թարիգի Ա-  
րամեան դպրոցի յորելեանը:

Եթէ նկատի ունենամք հին Պարս-  
կաստանի յետամնացութիւնը եւ բարո-  
յական ու նիւթական այն ծանր պայ-  
մանները, որոնց մէջ կայրէր պարսկա-  
հայը, Արամեան դպրոցի 100 տարեան  
կեանքը կը ներկայանայ մեզ որպէս հե-  
րոսական լուռ ու յամառ պայքարի մի  
չրջան, որի նշանակութիւնը խիստ մեծ  
է:

Կովկասահայ եւ պարսկահայ ըն-  
տիր, յառաջողէմ եւ ազատական մտա-  
ւորական սերունդէն շատերը իրենց կո-  
րովը, գիտութիւնը եւ ջանքերը դրած  
են այդ դպրոցի յարատեւութեան եւ  
մանաւանդ արդիացման վրա: Թարիգի  
դպրոցը փրկարար դեր է կատարած ի-  
րանահայութեան համար:

«Վէմ»-ի խմբագրութիւնը սրտագին  
կողջունէ արեւելիքի եւ արեւմուտքի այս  
երկու վեթերան մշակութային օջախնե-  
րու 100-ամեայ յորելեանները:

Վ. Փ.

**ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Խորհրդ. Հայաստանի մշակութային  
նախարի վրա ուշագրաւ դէպքեր են  
տեղի ունենում: Գարնան հետ միասին  
սկսած շարժումը, որի նպատակն էր  
«ստեղծագործական բուռն վիճարանու-  
թիւններով» (դիսկուսիա) եւ «ինքնա-

իննդատութեան լայն ծաւալումով»  
վերացնել գրականութեան եւ արեւստ-  
ների մէջ նկատուող «փորձալիստական,  
նատուրալիստական եւ այլ կարգի սը-  
խալները», ամառը, ծանօթ իրադար-  
ձութիւնների (Ա. Խանջեանի ինքնա-